

ՏԱՂ ՎԱՍՆ ԱՌՄԱՆՆ ՍՏԱՄՊՈԼԱՅ

ՈՂՈՐՄ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ

«Այսօր այս նամակիս հետ կը յղեմ ձեզ Արքահամ Անկիւրացիին Տաղ վասն առնանն ստանպօրայ անուն երգը, զոր ունեցած ձեռագիրն եւրոս մէջէն ամբողջապէս եւ հաւատարմաբար ընդօրինակելէս վերջը, բաղդատեցի Ա. Մատենադարանը դանուած օրինակի մը հետ, որուն սկիզբէն 38 տող իսկ վերջէն 36 տող պակասաւոր էր: Բաղդատութեանս տարբերութիւնները դրած եմ եւ նշանակած մէջը: Բայց այսօր կը լսեմ որ այս տաղը 1895ի «Արարատ»ին մէջ տպուած է եղեր արդէն, ուստի ձեզ կը թողում մնացեալը, եթէ յարմար կը սեպէք տպեցէք, զի Պօլսոյ առումէն յետոյ մեր առաջին հայ գրուածն է, որ Կ. Պօլսոյ հայ գաղութին ծագումը կը պատմէ:

Այս տաղը ղետեղուած է սկիզբը ձեռագիր փոքրիկ հատորի մը, որ հաւաքածոյ մըն է այլեւայլ նիւթերու, զոր օրինակ՝ (1⁰) Կարդ օսմ. թագաւորաց, որ մինչեւ Սուլթան Սէլիմ եւ Վ. թուականը կը հասնի, յետոյ (2⁰) Պատրիարքունք Հայոց յերուսաղէմ, մինչեւ Յովակիմ Պատրիարք եւ ՌՄԻԴ. թուականը: Վերջը կուգայ (3⁰) Պատրիարքունք Հայոց ՚ի Կ. Պօլիս, մինչեւ Զաքարիա Կաղզուանցիի 2րդ պատրիարքութիւնը եւ մինչեւ 1782 թուականը. իսկ յետոյ (4⁰) այլեւայլ հրդեհներու ժամանակագրութիւնը: Արդ կրնանք ըսել թէ այս ձեռագիր հատորըն 1782-1790 թուականներուն մէջ գրուած է, ընդօրինակուելով ուրիշ նման ձեռագրէ մը»:

ԹՈՏԻԻՆ

• •

յ'իւրն հարիւր 'ւերկու թըւին .
դառն եւ 'ի վատ ժամանակին .
Տէր բարկացաւ յոյժ վերըստին .
Ազգին հոռմոց յունականին :
Յարեաւ սուլթան մի ահագին .
որ Մուհամմատ անուանէին .
Ազգաւ նա թոռն էր օթմանին .
որդի նա Մուրաա խոնդքարին :
Նախ փոքրագոյն բան խորհեցաւ .
որ կատարածն էր ծանրագին .
բերդ մի ոկըսաւ 'ի ծովափին .
որ էր Պօղազ աղէքսանդրին :
Զոր ձեռնարկեալ շուտ կատարեաց .
'ի մէկ ամառն երեք ամսին .

հինգ մըղոնաւ էր նա հետի .
 Ղալաթիայու ֆռանկ քաղաքին :
 Դարձեալ գընաց 'ի յիւր տեղին .
 'ի յատրանա իւրեան թախտին .
 եւ զնենդու թեան խորհուրդն արար .
 Բիւզանթիոյ մեծ քաղաքին :
 Ջըմեռն 'ի քուն խոկունն արար .
 հողաց ըղպէտք պատերազմին .
 հրաման եհան յաշխարհն ամէն .
 եկա՛յք ամէնքդ զաղայու թիւն :
 Աղուհացից երկրորդ շաբթուն .
 ելեալ երեկ 'ի վրայ քաղքին .
 անթիւ հեծեալքս ժողովեաց .
 եօթն հարիւր հազարք էին :
 Նըստեալ բոլոր հիսարեցին .
 ծովով ցամքով նեղացուցին .
 զօրքըն թուրքաց բաղմանային .
 քրիստոնէից նըւաղէին :
 Իսկ թագաւորն ըստամպօլին .
 անզօր մընաց ամենեւին .
 զակն 'ի Ֆրռանկ աղղըն ձըղեց .
 թէ յօգնութիւն հասանէին :
 Իսկ աղգն անդու լատինական .
 բանս անյարմար 'ի մէջ բերին .
 աւանդութեամբ 'ի մեղ դարձեր (1) .
 զքաղաքդ արա՛ (2) 'ի մեղ յանձին .
 Իսկ թագաւորըն կոստանդին .
 հաւան եղեալ (3) բանից նոցին .
 քաղաքն երկուս (4) բաժանեցաւ .
 կէսքն 'ի հըռոմ (5) կէսքն 'ի լատին :
 Եւ անյաջողն էառ զնոսին .
 զաղղըն (6) յունաց եւ ֆրռանկին .
 հիւսիսային հողմըն հընչեաց .
 խափանեցաւ լօտօս (7) քամին .
 Զինչ զատըրղայք եւ նաւք կային .
 որք կուգային 'ի յօգնութիւն .
 անաջողակ երերալով .
 ուր որ կային անդ մընացին :

(1) 'ի մեղ դարձիք . — (2) արէք . — (3) հաւանեցաւ . — (4) քաղաքն յերկուս . — (5) կէսքն 'ի Հոռոմ . — (6) աղգն . — (7) նօտաւս .

Իսկ չար սուլթանըն մուհամմէտ .
 Թօի սահմանեաց մեծ 'ւահագին .
 զոր տեսողացըն հիացեալ .
 լըսողքն ամէն զարմանային :
 Փըլոյց ըզհինգ պուրճ քաղաքին .
 հաւասարեաց գեաներեսին (1) .
 'ի վրայ ծովուն ճամփայ արար (2) .
 Իբրեւ ցամաք (3) ընթանային :
 Քարող կարգաց մեծ բանակին (4) .
 քաջալերեաց զամենեսին .
 Թէ լըսեցէ՛ք ազգ մըսըլման .
 մեծ աւետեաց բան ձեզ պատմին :
 Թէ ըստամպօլ քաղաքըս մեծ .
 Թախտըն լինի (5) ձեզ եւ բաժին .
 մարդ 'ւանասուն ամէն ըողակ .
 ո՛վ որ առնու նըմա լինի (6) :
 Իսկ 'ի յամսեանըն մայիսին (7) .
 քըսան եւ ութ օր էր (8) նըմին .
 եւ 'ի յաւուր երկուշաբթին .
 որ հռիփսիմեանց (9) տօն կատարին :
 Յերեկորեայ յառաջ եկին .
 հասին 'ի յեզըր խանտակին .
 ըզ սայլատունսըն քարչեցին .
 ըզ սանդըխտնին (10) պատրաստեցին :
 'ի մարտ մըտեալ կըռիւ տային .
 մինչ լուսանալ առաւօտին (11) .
 նաեւ կիսոցն 'ի նաւ մըտեալ .
 'ի ծովակողմըն (12) պատեցին :
 Եւ 'ի ծագիլ արեգական .
 երեքշաբթի օր պատկերին .
 հայոց մեհեկ ամսոյ երեքն
 'ի սուրբ (13) գայիանեանց տօնին (14) :
 Տէր բարկութեամբ իսկ զարթուցեալ
 վասն (15) կոստանդինուպօլսին .
 մատնեաց ըզնա ձեռս ատելեաց .

(1) երես գեանին . — (2) արին . — (3) իբր ընդ ցամաք . — (4) մէջ
 քաղաքին . — (5) Թալան լիցի . — (6) լիցին . — (7) մայիսի . — (8) աւր
 էր . — (9) որ հռիպսիմեանց . — (10) ըզ սանդըխտնին . — (11) առաւ
 ւաւօտին . — (12) ըզ ծովակողմն . — (13) որ սուրբ . — (14) տաւնէին .
 — (15) վերա .

չար թըշնամիք զինքն տիրեցին (1) :
 Իսկ թագաւորն եւ զօրք նորին ,
 բազում ջանիւ 'ի մարտ մըտին .
 ո'չ կարացին ընդդիմանալ ,
 զի տէր դարձոյց իւր (2) օգնութիւն :
 Քանզի յերկուս բաժանեցան .
 միաբանիլ ո'չ կարացին (3) .
 ոմանք 'ի հետ թագաւորին ,
 կէսքն ասէին կուտամք թուրքին :
 Իբրեւ զորձանըս հեղեղաց .
 տաճկունք դիմեալ 'ի ներս մըտին .
 շատ ոք պարիսպն 'ի վեր ելին .
 եւ պարանաւ վեր քարշէին (4) :
 Յորժամ (5) ետես այն (6) թագաւորն .
 անզօր մնացեալ ինքն (7) 'ի մարտին .
 հընար եղիտ (8) փախուստ առնուլ .
 զի բարկութիւն հաս նըմին :
 Ոմն 'ի յազգացըն ֆըռանկին (9) .
 որ զափուտան անուանէին .
 առեալ զարքայն (10) եւ զմեծամեծս ,
 փախուստ էառ (11) վերայ ծովին :
 Եւ մըսըլման ազգն որ կային (12) ,
 արձակեցան (13) 'ի քաղաքին .
 նախ ըզպալատն եկեալ առին .
 որ դարպասն էր (14) թագաւորին :
 Անտի չուեալ յառաջ գնացին .
 դիմեալ յաւագ եկեղեցին .
 Սուրբ սոփիայ (15) անուանէին ,
 եւ էր աթոռ պատրիարքին :
 Բազումք արանց քրիստոնէից ,
 անդ դումարեալ 'ի մարտ մըտին .
 յոյժ նախանձու բորբոքեցան (16) .
 իբրեւ զորդեակս վերայ ծնողին :
 Զանձինս իւրեանց 'ի մահ տըւին .

(1) զնա պատեցին . — (2) զիւր . — (3) ոչ արարին միաբանութիւն
 — (4) այլք չուանեալ վայր քարշէին . — (5) յայնժամ . — (6) յոյն .
 — (7) զինքն . — (8) հնարեցաւ . — (9) ֆըռանկաց . (10) զթագաւորս .
 — (11) նաւով փախեալ . — (12) որ մտին . — (13) յարձակեցան . — (14) որ
 են դարպաս . — (15) սոփիեա . — (16) բորբոքեցան .

Որպէս զոչխար (1) 'ի սպանդ մըտին .
 անթիւք սըրով անկանէին .
 Որպէս զառու արիւնքն հոսին :
 Իսկ չար սուլթանըն մուհամմէտ (2) .
 Մըտեալ ի մեծ եկեղեցին (3) .
 յոյժ գոհութեամբ ուրախ լինէր .
 որ եւ հասաւ յիւր ըղձաւոյն (4) :
 Եւ զօրքն անթիւ որք զհետ (5) մըտին .
 յարձակեցան 'ի փողանին .
 Իբրեւ գազանք (6) մըռնչէին .
 որք ծարաւիք արեան լինին :
 զՊատերազմօղսըն զոր գըտին .
 զամենեւեան կոտորեցին .
 այլ եւ ըզմայրս (7) եւ ըզկանայս .
 'ի գերութիւն իսկ (8) վարեցին :
 Եւ զնորահաս սըղայս նոցին .
 'ի մօր գըրկացըն խըլէին .
 առեալ զքարի հարկանէին .
 զծերօըն սըրով խողխողէին (9) :
 Այլ զազազակ եւ զողբ նոցին .
 ըզլաւաց ձայն (10) եւ զկականին .
 ոչ ոք լեզուաւ ասել կարէ .
 եւ ո՛չ բանիւ մարդկան պատմին :
 Զկրօնաւորաց դասքն որ կային .
 որք կալէտոսք (11) անուանէին .
 եւ 'ի կանանց ազգէ (12) բազումք .
 որք կալօղրիայք կոչէին (13) :
 Կալեալ զնոսա յոյժ քարչէին .
 զի կապեացեն եւ գերեացեն .
 իսկ նոքա յոյժ ընդդէմ դարձեալք ,
 յերկիր անկեալք թաւալէին :
 Բազումք կամաւ 'ի ծունկս անկեալք ,
 ըզպարանոցս 'ի սուր տային .
 վըկայական յօժար մահուամբ ,
 անդէն նոքա կատարէին (14) :
 Զեկեղեցիս աստուածազարդ .

(1) զոչխարս . — (2) մէհէմէտ . — (3) յեկեղեցին . — (4) իւր մուրա-
 տին . — (5) որ հետ . — (6) իբրեւ զգազան . — (7) այլ եւ զայրս . — (8) խիստ .
 — (9) խողխողեցին . — (10) լալեացն ըղձայն . — (11) որ կալորոսք .
 — (12) ազգաց . — (13) որ կալօղրեայք կու կոչէին — (14) կատարեցին .

յոյժ անողորմ կողոպտեցին .
 'ի պատուական սուրբ անօթից (1) ,
 եւ 'ի զարդուց մերկացուցին :
 Ըզսուրբ մարտիրոսաց նըշխարսն (2) ,
 զոր պատուելով անդ (3) պահէին ,
 զամենեւեան յոյժ ցըրուեցին ,
 ոտըն (4) հարեալ կոխան արին :
 Զթագաւորաց ըզգերեզմանսն ,
 որ 'ի մարմար (5) տապան կային .
 բացեալ զնոսա կողոպտեցին ,
 զոսկերսն որպէս փռչի հոսին :
 Զայն ամենայն 'ի սըրբութեանցն ,
 ոչ ոք հըրաչս ո'չ յայտնեցին ,
 վասըն բազում մեղաց մերոց ,
 ամենեքեան յոյժ լըռեցին :
 Ըզզանկակնին վայր թափեցին ,
 ժամահարնին կոտորեցին .
 զնշան խաչին անհետ արին ,
 ԸզՍուրբ Խորհուրդըն ցըրուեցին :
 Առեալ զաւարս (6) եւ ըզգերսն ,
 'ի քաղաքէն 'ի դուրս հանին (7) .
 յ'երեք ժամէն մինչ յ'ինըն ժամն ,
 ոչինչ թողին 'ի քաղաքին :
 եւ զմեծ իշխանն յունաց ազգին ,
 որ կիրլուկայ անուանէին ,
 եւ զնա գըտեալ ըմբըռնեցին ,
 բերին յառաջ չար սուլթանին :
 եւ յոյժ սիրով զնա մեծարեաց ,
 մինչ գողացաւ խորհուրդ նորին .
 որ եւ յետոյ ետ գըլխատել (8) ,
 զերկու որդիս իւր ընդ նըմին (9) :
 Զինչ մըսըլման ազգ որ կային ,
 ուրախութեամբ 'ի խաղ մըտին ,
 գոհանալով յոյժ ցընծային ,
 մեծ աւետիս միմեանց տային :
 Թէ զըստամպօլն (10) յաւիտենից ,

(1) 'ի պատուական 'ի յանաւթից . — (2) մարտիրոսաց ըզսուրբ նշխարսն . — (3) անդ . — (4) յոտըս . — (5) որ 'ի մարմար . — (6) զաւարսն . — (7) ելին . — (8) յետոյ սըրով զնա գըլխատեաց . — (9) 'ի միասին . — (10) զստամպօլն .

զոր չէ առեալ տաճկաց ազգին .
 զոր այժմ՝ յետին ժամանակին (1)
 Աստուած ետ (2) զնա մեզ 'ի բաժին (3) :
 Իսկ քրիստոնեայ ազգըն (4) ամէն ,
 մեծ տըրտմութեամբ 'ի սուգ (5) մըտին .
 քանզի քաղաքն ապաստանի ,
 մատնեալ 'ի ձեռս այլասեռի (6) :
 Բազում ապրանք աւար առին (7) ,
 արծաթ ոսկի (8) եւ մարգարտին (9) ,
 ակունք աղնիւք եւ պատուականք ,
 զոր չէ տեսեալ ազգ (10) հողածին :
 Զեկեղեցեաց ընտիր անօթքն (11) ,
 մարգարտաշար եւ մեծագին ,
 պատկեր նըկար վայելչական ,
 արծաթապատ Աւետարան (12) :
 Ըզ ատրանայ (13) քաղաք լըցին ,
 եւ ըզՊուռսայ յագեցուցին (14) ,
 մինչ (15) յանկիւրեայ շատ ինչք բերին ,
 աշխարհ (16) ամէն ըսփըռեցին :
 Խիստ անհամար գըրեանք բերին ,
 տաճկունք տեսեալ զարմանային ,
 քըրիստոնեայքն այնչափ առին ,
 շատըն մընաց մօտ 'ի տաճկին (17) :
 Այլ թէ զմարդկան ասեմ զգերին ,
 զմեծամեծացն եւ ըզուամկին ,
 քահանայից դասուցն այնչափ ,
 ո՛չ կայր հաշիւ (18) ժողովըրդեան :
 Ծերք եւ տըղայք երիտասարդք ,
 կանայք բազումք աղջկունք (19) նոցին ,
 ընդ ամենայն ոլորտս երկրի ,
 իբր ըզփոշի տարածեցին (20) :
 Փոքըր քաղաք Ղալաթիայ (21) ,
 որ էր ֆռանկաց իշխանութեան ,

(1) այժմ՝ 'ի յետին ժամանակիս . — (2) ետուր . — (3) մեզ բաժին .
 — (4) ազինքն . — (5) 'ի սուգ . — (6) մատնեալ եղեւ ձեռն այլազգին .
 — (7) հանին . — (8) 'ւոսկի . — (9) մարգարտին . — (10) մարդ . — (11) աւ
 նաւթ ընտրեալք . — (12) մարգարտաշար եւ մեծագին | արծաթապատ
 աւետարանք , | պատկեր նըկար վայելչագին . — (13) ըզյատրանա .
 — (14) կըշտացուցին . — (15) մինչ . — (16) յաշխարհս . — (17) շատ մի
 մնաց 'ի մաւտ տաճկին . — (18) համար . — (19) աղջկունք . — (20) տա
 րեցին . — (21) Ղալաթիեա .

մեծամեծացն 'ի նաւ մըտեալ ,
 'ի ծովակողմն փախուստ առին :
 Իսկ մընացեալքն 'ի նոցանէ ,
 Եւ առաջնորդք զորս եւ կային ,
 ահիւ եկեալ (1) եւ դողութեամբ ,
 Առլթանին ոտքն (2) անկանէին :
 Եւ նա պատուէր տըւեալ նոցին ,
 Թէ հնազանդ էք (3) իմ հրամանին .
 քակէք զպարիսպն քաղաքին (4) ,
 Եւ զամուր պուրճըն (5) ոահաթին :
 Այլ եւ նոքա 'ի յանձն առեալ (6) ,
 զհրամանս նորա կատարեցին ,
 զցամաքակողմըն (7) քակեցին ,
 եւ հաւասար հողոյն արին (8) :
 Փոխեաց զանունն ըստամպօլին ,
 որ 'ի քաղաքըն թարգմանին ,
 ասաց իսլամպօլ կոչեսցի ,
 որ բաղմութիւն տաճկաց ասի :
 Զմեծահասակըն (9) սոփիայ (10) ,
 որ թարգմանի իմաստութիւն ,
 աւագ մըղկիթ զնա արարին (11) ,
 եւ սոփիայ անուանեցին (12) :
 Կացոյց իշխան մի քաղաքին (13) ,
 էր սուլէյման անուն նորին .
 այլ եւ բաղումք զօրք ընդ նրմին ,
 եւ դատաւոր զիւրեան (14) զատին :
 Դարձեալ հրամանս եհան ուժգին ,
 որ լըսողացն է զառնութիւն ,
 յամէն քաղաք տանըս հոռմոց ,
 որք են յիւրեանց իշխանութիւն :
 Ասաց մարդիկ հանել տընով ,
 տանիլ լընուլ այն քաղաքին (15) ,
 մեծ վիշտ եղիւ թուրքաց (16) ազգին ,
 զոր եւ ողբան յոյժ լալագին :
 Զի հարք (17) յորդուոց բաժանէին ,

(1) եկեալ յահիւ . — (2) սուլտանին յոտքն . — (3) թէ հնազդէք .
 — (4) նա՛ քակեցէք զպուռճ քաղաքին . — (5) պարիսպն . — (6) 'ի
 յանձն առին . — (7) զցամաքի կողմըն . — (8) արարին . — (9) զմեծա-
 հըռչակն . — (10) սոփիեայ . — (11) արար զնա . — (12) եւ սոփիեա զա-
 նունն նորին . — (13) 'ի քաղաքին . — (14) զղայեայ . — (15) յան քա-
 ղաքին . — (16) տաճկաց . — (17) հայր .

գըստերք 'ի մարցըն կուգատին .
 եղբայր յեղբօրէ կուքակին .
 'ի հայրենեաց բազումք զըրկին :
 նա՛ որ միայն տաճկաց ազգին ,
 այլ զքրիստոնեայքն 'ի մէջ բերին ,
 'ի քսան եւ ութն հոկտեմբերին ,
 զչորս հայ 'ի յանկելորոյ (1) բերին :
 Աստուածատուր սաթըլմիշին ,
 եւ սիմէօն բարի բաշին (2) ,
 եւ պապայի որդի այվատն ,
 եւ պարոն գորգ (3) էշիմ (4) հաճին :
 Այժմ ասասցուք յաւարտ (5) բանին ,
 քանի ասեմ ցաւն երկարին (6) ,
 յ'ինն հարիւր երկու (7) թըւին ,
 զԲիւզանդիայ տաճկունքն առին ,
 Այլ մեք գոչեմք յոյժ ողբալով ,
 եւ հառաչեմք արտասուելով ,
 յոգոց (8) հանեմք կըսկըծալով ,
 ըզմեծ քաղաքն ափսոսալով :
 Եկայք եղբարք հաւատացեալք ,
 հարք եւ ընտրեալք իմ սիրեցեալք ,
 ողբս արտասուաց յարմարեսցուք (9)
 բանիս որ այժմ են պատահեալք (10) ,
 Կոստանդինուպօլիս գովեալ ,
 Թագաւորաց դահոյք կազմեալ ,
 այժմ յէ՞ր եղեր դու աւերեալ ,
 յանօրինաց կոխան եղեալ :
 Կոստանդինուպօլիս ընտրեալ ,
 մայր քաղաքաց (11) դու անուանեալ ,
 դու թըշնամեաց եղեր մատնեալ ,
 ձեռըն նեղչաց քոց քեզ տիրեալ :
 Կոստանդիանոս մեծ արքայն .
 որ 'ի հըռոմ Թագաւորեալ ,
 եւ Սեղբեսարոս (12) հայրապետիւ
 նա 'ի Քրիստոս հաւատացեալ :
 Ճանապարհաւ քեզ հանդիպեալ ,

(1) 'ի յանկուրու . — (2) բարի փաշին . — (3) գորգն . — (4) յէշիմ .
 — (5) աւարտ . — (6) քանի ասեմք զցաւն երկրիս . — (7) 'ւերկու .
 — (8) Հոգոց հանեմք . — (9) յարմարեսցուք ողբս արտասուաց . — (10) պա-
 տահած . — (11) մայրաքաղաք . — (12) Սեղբեսարոս .

Տեսեալ ըզքեզ յոյժ հիացեալ (1)
 իւր աթոռոց տեղի (2) շինեալ ,
 եւ նոր հըռօմ զքեզ անուանեալ :
 Մեծ թէոթոսն 'ի քեզ բազմեալ .
 Երկու որդոջն 'ի քեզ կացեալ .
 Արկաղէոս եւ ռնորէս ,
 եւ թէոդոս փոքրըն ընարեալ (*) :
 Յուստիանոս (3) թագաւորեալ
 յոյժ մեծ անուանի կայսր եղեալ (4) ,
 զդիրըս քո նա յաւելեալ
 եւ զսոփիայն մեծացուցեալ :
 Հանդէպ դըրան եկեղեցւոյն (5) .
 յոյժ բարձրագոյն արձան կանգնեալ ,
 եւ պըղընձոյ ձիաւորեալ ,
 զինքն 'ի վերայ օրինակեալ :
 Հեթանոսաց 'ի քեզ մըտեալ ,
 եւ ըզտաճար քո սուրբ պըղծեալ ,
 մըրգապահաց խուղ արարեալ ,
 եւ դիակունս (6) թըռչնոց արկեալ :
 Շուրջ քեւ զարիւնս (7) նոցա հեղեալ ,
 եւ չէր ոչ ոք (8) զնոսա թաղեալ .
 նախատ դրացեաց զքեզ արարեալ (9) ,
 շըրջակայիցըն ծաղր եղեալ :
 Զերիտասարդս քո հուր կերեալ (10) ,
 եւ կուսանացդ ոչ ոք սգացեալ
 քահանայք քո 'ի սուր անկեալ ,
 զայրիսըն քո ոչ ոք լացեալ :
 Զայնք սաղմոսաց 'ի քէն հատեալ ,
 եւ պաշտօնեայքըն պակասեալ ,
 քաղցր եղանակքըն խափանեալ ,
 ժամահարաց երգք ոչ հընչեալ :
 Պատարագունքն 'ի քէն լըսեալ ,
 մարմին 'ւարիւն Տեառն ո'չ բաշխեալ ,
 անոյշ երգունքն ալէլուից ,
 յոյժ նուաղեալ եւ ըսպառեալ :
 Ո'հ թէ լինէր տէր զարթուցեալ ,

(1) եւ յոյժ սիրեալ . — (2) տեղիք . — (*) Այս նորս տողերը կը պա-
 կասին ինձ սեպհական ձեռագրին մէջ : — (3) Եւստիանոս . — (4) յոյժ
 անուանի մեծ կայսր եղեալ . — (5) եկեղեցւոյն . — (6) եւ զդիակունս .
 — (7) ջուրք եւ զարիւնս . — (8) եւ է ոչ ոք . — (9) նախադըրացեաց
 արալեալ (սխալ է այս) . — (10) հուր կերեալ .

Իբր այր հըղօր զգինին թափեալ ,
 զթշնամին քո յետս ընկըրկեալ (1) ,
 եւ յաւիտեան քեզ հաստատեալ :
 Եղբայրք եւ զայս պարտիմք քըննել ,
 թէ այս նոցա է՞ր պատահեալ ,
 զի սուրբքն 'ի մէնջ են հեռացեալ (2)
 ճըշմարտութիւնքըն նըուաղեալ :
 Եւ առաջնորդք նոցա մուկեալ ,
 'ի սըրբութեանցըն հեռացեալ ,
 ժամ եւ աղօթք ո՛չ արարեալ ,
 եւ մաքրութեամբ (3) ո՛չ կատարեալ :
 Իշխանք նոցա ուղիղ չդատեալ ,
 զորքն եւ զայրին վըշտացուցեալ ,
 եւ զժողովուրդն առհասարակ ,
 խիստ անառակ գործ ըստացեալ :
 Վասն այն Աստուած յոյժ բարկացեալ ,
 եւ ցաւագին պատուհասեալ ,
 սաստիկ դանիւ զնոսա հարեալ ,
 Իբրեւ զփռչի զնոսա ցըրուեալ :
 Զայս ամենայն զորս (4) յիշեցաք ,
 լինիմք մեղաց մեք հեռացեալ ,
 սովորական չարեաց դատեալ :
 Բարի գործոց բուռն հարեալ :
 Յեկեղեցիս յուսով դիմեալ ,
 զաղօթս ըստէպ մեք կատարեալ ,
 պահք սըրբութեամբ մեք ըստացեալ ,
 զողորմութիւնն ո՛չ խափանեալ :
 Զյանցանս յատուկ խոստովանեալ ,
 արտասուելով ապաշխարեալ ,
 զնոսա անեալ մեզ ողորմեալ ,
 որ ո՛չ լինիմք նոցա նմանեալ :
 Միթէ լինի Տէրն ողորմեալ ,
 եւ 'ի չարեաց ըզմեզ պահեալ ,
 'ի մեզ խնայեալ եւ գըթացեալ ,
 ըզպատուհասն յետ դարձուցեալ :
 Աստէն անփորձ ըզմեզ պահեալ ,
 չար բանսարկուէն զմեզ ազատեալ ,
 յանօրինաց չարեաց փըրկեալ ,

(1) յետս հարեալ . — (2) եղեն յոյժ նուաղեալ . — (3) այն սըրբութեամբ . — (4) զմեզս .

եւ 'ի նեղչաց զմեզ զերծուցեալ :
 Հոգեւարի աւուրն օգնեալ ,
 հրեշտակ բարի մեզ առաքեալ ,
 մարմնոյ 'ւարեան տեսուն հաղորդեալ ,
 օրհնեալ հողով լիցուք թաղեալ :
 Յաւուրն մեծի դատաստանի ,
 զիւր սուրբ եկայք ձայնըն լըուեալ ,
 յաջակողման դասուն կարգեալ ,
 զՏէրն յաւիտեան օրհնարանեալ :
 Ես Աբրահամ մեղօք լըցեալ ,
 բազում ցաւօք զողբս յօրինեալ ,
 քանզի կոստանդընուպօլսի ,
 ըզբարութեան ժամն եմ տեսեալ :
 Երեք ամիս անդ եմ կեցեալ ,
 եւ զսրբութիւնսն ուխտ արարեալ ,
 ըզպատմութեանըն քրիստոսի ,
 բազում անգամ աչօք տեսեալ :
 Զձեզ աղաչեմ յոյժ աղերսեալ ,
 որք հանդիպիք զողբս ընթերցեալ ,
 թէ գրտանէք 'ի սմա սըխալ ,
 ներումն առնէք ո'չ մեղադրեալ :

Կ Ի Պ Շ Ո Ս Ի Զ Շ Ո Ն Ի Կ Ը

ՄԻՋԻՆ ԴԱՐԻ ՄԷՋ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ)

(Շարունակութիւն)

Լուսինեաններու փրանկ թագաւորութիւնը տասնեւմէկ երկիրնե-
 րու բաժնուած էր . — Դերկոմսութիւնը (Նիկոսիա) , Մեսսաօրէա , Կար-
 պաս , Կերինէս , Լառնաքա , Մեղօթօ , Լիմասօլ , Աւդիմոն , Պափոս ,
 Պենդայիա եւ Խրիւսօխօ :

Այս երկիրներէն իւրաքանչիւրը իրեն յատուկ հարստութիւնն ու-
 նէր . Լառնաքա , հին Քիթթիոնը , որ Քրիստոսէ 1400 տարիներ առաջ
 կառուցուած էր փիւնիկեցիներէ , ունէր իր աղի հանքերը , նուիրուած
 սուրբ Լադրի եւ սուրբ Ղազարի : Խրիւսօխօ ունէր ահագին անտառներ .
 Լիմասօլ՝ Ամանթոնտի դաշտին արեւմտեան ծայրը , ունէր նարնջենի-